Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

MINERVA 2019-2022

Strengthening Research Management and Open Science Capacities of HEIs in Moldova and Armenia

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՊՏՀ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

2020

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտահետազոտական գործունեության կարգավորման, իրականացման և խթանման վերաբերյալ» պրոֆեսորադասախոսական կազմի հարցումն իրականացվել է ՀՊՏՀ-ում, ԵՄ «Էրազմուս+» ՀԳ2 նախագծի «Հետազոտությունների կառավարման և բաց գիտության կարողությունների հզորացումը Մոլդովայի և Հայաստանի բուհերում (Minerva)» ծրագրի շրջանակում՝ Հետազոտողների եվրոպական խարտիայի 40 չափանիշներին ՀՊՏՀ-ի համապատասխանության գնահատման գիտահետազոտական ոլորտի ինքնավերլուծության նպատակով:

Գիտահետազոտական ոլորտի ինքնավերլուծությունն անհրաժեշտ է Հետազոտողների համաեվրոպական հարթակին՝ EURAXESS-ին անդամակցելու համար: ՀՊՏՀ-ն ակնկալում է ստանալ գերազանցության աստիճան՝ նոր հնարավորություններ ստեղծելով հետազոտական ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման համար:

Անանուն հարցումն իրականացվել է էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Moodle (https://moodle.asue.am/) հարթակում:

Հարցաթերթի նմուշը ներկայացված է հավելվածում:

Հարցմանը մասնակցել է հիմնական և համատեղությամբ աշխատող ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի 164 ներկայացուցիչ (հետազոտող), որոնք կազմում են թիրախային խմբի 51%-ը:

Հարցվողների 65.9%-ն իգական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 34.1%-ը՝ արական (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ***Հարցվողների սեռային համամասնությունը***

Ընդ որում, հարցմանը մասնակցած հետազոտողների 7.9%-ն ունի գիտությունների դոկտորի գիտական աստիճան, գերակշիռ մասը կամ 67.7%-ը՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, իսկ գիտական աստիճան չունեցողների մասնաբաժինը կազմում է 24.4% (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***Հետազոտողների բաշխումը՝ ըստ գիտական աստիճանի***

Հարցմանը մասնակցած հետազոտողների 36%-ը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում է աշխատում 20 տարուց ավելի, 6.1%-ը՝ շուրջ 15-20 տարի, 10-15 տարի տևողությամբ աշխատող հետազոտողները կազմում են հարցվածների 22%-ը: Քիչ չեն նաև ՀՊՏՀ-ում աշխատանքի համեմատաբար կարճատև փորձառություն ունեցողները. 5-10 տարի աշխատել է հարցվածների 17.7%-ն, իսկ 1-5 տարի՝ 15.2%-ը (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ***ՀՊՏՀ-ում աշխատանքի տևողությունը***

Հետազոտողների 57.3%-ը համոզված է, որ ՀՊՏՀ-ում կարևորվում են հետազոտական ազատության հիմնարար սկզբունքները, որոնք արտահայտվում են հետազոտական թեմաների, ուղղությունների, մեթոդաբանության ազատ ընտրության և ազատ կամարտահայտության հնարավորությամբ՝ հաշվի առնելով ֆինանսական, էթիկական և այլ բնույթի սահմանափակումները, 30.5%-ը խնդրի վերաբերյալ դրսևորում է որոշակի վերապահումներ՝ հարցին պատասխանելով ավելի շատ «այո», քան «ոչ», առավել հոռետեսական ընկալումներով («ավելի շատ ոչ, քան այո») է առանձնացել հարցվածների ընդամենը 1.8%-ը, իսկ 10.4%-ն ընդհանրապես դժվարացել է պատասխանել (գծապատկեր 4):



Գծապատկեր 4. ***«ՀՊՏՀ-ում կարևորվում են հետազոտական ազատության հիմնարար սկզբունքները (հետազոտական թեմաների, ուղղությունների, մեթոդաբանության ազատ ընտրություն, ազատ կամարտահայտություն՝ հաշվի առնելով ֆինանսական, էթիկական և այլ բնույթի սահմանափակումները)»*** *պնդման պատասխանները*

Միաժամանակ, բուհական, ոլորտային, ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում կիրառվող հետազոտությունների իրականացման էթիկական սկզբունքների և ստանդարտների մասին միանգամայն տեղյակ է հետազոտողների 38.4%-ը, մյուս 42.7%-ը թեև տեղյակ է գործող պահանջներին, սակայն համոզված չէ, թե տիրապետում է ողջ անհրաժեշտ տեղեկատվությանը, 11.6%-ը խոստովանում է, որ մասամբ է տեղեկացված հետազոտությունների իրականացման էթիկական սկզբունքներին և ստանդարտներին: Հարցադրմանը «ոչ» պատասխան չի տրվել, մինչդեռ 7.3%-ը դժվարացել է հարցին հստակորեն պատասխանել (գծապատկեր 5):



Գծապատկեր 5. ***«Արդյո՞ք տեղյակ եք հետազոտությունների իրականացման էթիկական սկզբունքների և ստանդարտների մասին, որոնք կիրառվում են բուհական, ոլորտային, ազգային և ինստիտուցիոնալ մակարդակներում»*** *հարցի պատասխանները*

Այն հարցում, որ ՀՊՏՀ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքում պահպանվում են գրագողության կանխարգելման և ակադեմիական էթիկայի կանոնները, վստահ է հարցվածների ընդամենը 18.3%-ը, առավել

մեծ կշիռ ունեն խնդրին թերահավատները՝ հարցին ավելի շատ «այո», քան «ոչ» պատասխանների 41.5%-ով, մինչդեռ 12.2%-ն առավել խնդրահարույց է համարում («ավելի շատ ոչ, քան այո») գրագողության կանխարգելման և ակադեմիական էթիկայի կանոնների պահպանումը համալսարանում, իսկ ընդամենը 3%-ի պնդմամբ՝ դրանք հաստատապես չեն պահպանվում: Միաժամանակ, հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 25%-ը (գծապատկեր 6):



Գծապատկեր 6. ***«ՀՊՏՀ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքում պահպանվո՞ւմ են արդյոք գրագողության կանխարգելման և ակադեմիական էթիկայի կանոնները»*** *հարցի պատասխանները*

«Խնդրում ենք մատնանշել իրավիճակի շտկմանը նպաստող առաջարկություններ» բաց հարցին տրված պատասխանների վերլուծության արդյունքում ձևավորվել է հետևյալ պատկերը.

- Հարցվողների գերակշիռ մասը համակարծիք է այն հարցում, որ ՀՊՏՀ-ում անհրաժեշտ է ներդնել հակագրագողության գործուն համակարգ՝ համապատասխան ծրագրային ապահովման և գրագողության դեմ պայքարը կանոնակարգող փաստաթղթերի մշակման, ընդունման և կիրառման միջոցով:
- Քանի որ ՀՀ-ում չկա այնպիսի իրավական փաստաթուղթ, որը կսահմաներ գրագողության շրջանակները, ապա անհրաժեշտ առաջավոր արտասահմանյան փորձի հիման վրա իրականացնել ակադեմիական էթիկայի սկզբունքների ու չափանիշների մշակում և կիրառում համապետական և ներբուհական մակարդակներում:
- Կարևորվում է նաև պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում ակադեմիական էթիկայի վերաբերյալ իրազեկման միջոցառումների պարբերաբար կազմակերպումը:
- Անհրաժեշտ է կազմակերպել վերապատրաստման դասընթացներ՝ մշտապես զարգացնելով հետազոտական նորագույն մեթոդների տիրապետման և կիրառման հմտությունները հետազոտողների շրջանում:

- Անհրաժեշտ է նախատեսել պատժիչ միջոցառումներ՝ հետազոտողների շրջանում գրագողության փաստի արձանագրման և (նյութական, ոչ նյութական) խրախուսման կառուցակարգեր՝ որակյալ գիտահետազոտական գործունեություն ծավալելու դեպքում:
- Բուհում սրբագրման գործիքների կամ համակարգչային ծրագրերի ներդրում, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի համար դրանց մատչելի հասանելիության կազմակերպում:
- Գիտահետազոտական թեմաների առաջադրման և կատարման հնարավորությունների ընձեռում բոլոր ամբիոններին և կառուցվածքային ստորաբաժանումներին՝ միաժամանակ բացառելով միևնույն ամբիոնում փոխկապակցված անձանց աշխատելու հնարավորությունը:
- Յուրաքանչյուր հետազոտող պետք է վեր կանգնի զուտ անձնական, նեղ խմբակային շահերից և համարձակություն ունենա բարձրաձայնելու ակադեմիական էթիկայի խախտման դեպքերը:
- Գործընթացը կանոնակարգել՝ պարտադիր պահանջներ սահմանելով պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության նկատմամբ:
- Ընդլայնել գիտահետազոտական աշխատանքներին երիտասարդ մասնագետների ներգրավվածությունը:
- Ընդդիմախոսներին ընտրել բացառապես համակարգչային, կույր ընտրության եղանակով: Խոսքը բոլոր տեսակի փորձաքննությունների մասին է՝ հոդվածներ, մենագրություններ, ավարտական, մագիստրոսական թեզեր, թեկնածուական ատենախոսություններ և այլն:
- Անհրաժեշտ է ապահովել ԳՀԱ-ների թեմաների ազատ առաջադրում, քննարկում, հիմնավորում՝ միմիայն ելնելով բուհի և որակյալ կրթության առաջնահերթություններից:

Հարցվածների 43.3%-ը միանգամայն տեղեկացված են իրենց հետազոտական հետաքրքրությունների ոլորտում սահմանված ռազմավարական նպատակների, հետազոտությունների իրականացման և հաշվետվողականության գործընթացի կարգավորման իրավական նորմերի, ընթացակարգերի և սկզբունքների վերաբերյալ, 36%-ը կարծում է, որ ավելի շատ տեղեկացված է, քան՝ ոչ, 9.1%-ը սեփական տեղեկացվածությանն առավել կասկածանքով է վերաբերվում («ավելի շատ ոչ, քան այո»), և միայն 1.2%-ն է խոստովանում խնդրի վերաբերյալ անտեղյակությունը: Հարցվողների 10.4%-ը դժվարացել է պատասխանել (գծապատկեր 7):



Գծապատկեր 7. ***«Տեղեկացվա՞ծ եք արդյոք Ձեր կողմից իրականացվող հետազոտությունների ոլորտում սահմանված ռազմավարական նպատակների, հետազոտությունների իրականացման և հաշվետվողականության գործընթացի կարգավորման իրավական նորմերի, ընթացակարգերի և սկզբունքների վերաբերյալ»*** *հարցի պատասխանները*

Հետազոտական գործընթացը կարգավորող իրավապայմանագրային դրույթներին (ազգային, ոլորտային, ինստիտուցիոնալ կարգավորումներ, մտավոր սեփականության իրավունք և այլն) լիովին տիրապետում է հետազոտողների 25%-ը, 51.2%-ը դրանց տիրապետում է որոշակի վերապահումով («ավել շատ այո, քան ոչ»), իսկ 14.6%-ը՝ մասնակիորեն («ավել շատ ոչ, քան այո»): Հետազոտողների շրջանում հետազոտական գործընթացը կարգավորող իրավապայմանագրային դրույթներին չտիրապետողներ չկան, թեև նրանց շուրջ 9.1%-ը դժվարացել է պատասխանել հարցին (գծապատկեր 8):



Գծապատկեր 8. ***«Արդյո՞ք տիրապետում եք հետազոտական գործընթացը կարգավորող իրավապայմանագրային դրույթներին (ազգային, ոլորտային, ինստիտուցիոնալ կարգավորումներ, մտավոր սեփականության իրավունք և այլն)»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների 33.5%-ը միանգամայն համոզված է, որ ներքին և արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների համար համալսարանում գործում է հետազոտական գործունեության հաշվետվողականության թափանցիկ համա-

կարգ, 36.6%-ը հավատացած է, որ թեև համակարգը գործում է, սակայն առկա են որոշակի թերություններ («ավել շատ այո, քան ոչ»), 10.4%-ը կարծում է, որ առկա են այդ համակարգի որոշ տարրերը միայն («ավել շատ ոչ, քան այո»), և ընդամենը 0.6%-ն է պնդում, որ նման համակարգ համալսարանում չի գործում: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 18.9%-ը (գծապատկեր 9):



Գծապատկեր 9. ***«Արդյո՞ք համալսարանում գործում է հետազոտական գործունեության հաշվետվողականության թափանցիկ համակարգ՝ ներքին և արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների համար»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների 43.3%-ը հաստատապես պնդում է, որ համալսարանն ապահովում է աշխատանքային պայմանների և տեղեկատվական անվտանգության պատշաճ մակարդակ, 42.7%-ը ևս կարծում է, որ այդ ուղղությամբ գործարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ չբացառելով որոշակի թերացումների հավանականությունը, առավել պահանջկոտ 4.9%-ը հակված է կարծելու, որ համալսարանը թերանում է այդ հարցում, և միայն 0.6%-ն է համարում, որ համալսարանին չի հաջողվում ապահովել աշխատանքային պայմանների և տեղեկատվական անվտանգության պատշաճ մակարդակ: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 8.5%-ը (գծապատկեր 10):



Գծապատկեր 10. ***«Արդյո՞ք համալսարանն ապահովում է աշխատանքային պայմանների և տեղեկատվական անվտանգության պատշաճ մակարդակ»*** *հարցի պատասխանները*

Հետազոտողների միայն 23.8%-ն է հետևողական ջանքեր գործադրում իր իսկ կողմից իրականացված հետազոտության արդյունքների տարածման (իրազեկման), գործնական կիրառության և առևտրայնացման ուղղությամբ: Միաժամանակ, 46.3%-ը կարծում է, որ նման միջոցառումները թեև իր կողմից իրագործվում են, սակայն դեռևս լիարժեք չեն: Հարցվածների 15.9%-ի համոզմամբ՝ նման միջոցառումները խիստ սահմանափակ և հատվածական բնույթ են կրում, իսկ 0.6%-ն անկեղծ խոստովանում է, որ հետազոտության արդյունքների տարածմանը (իրազեկմանը), գործնական կիրառությանը և առևտրայնացմանն ուղղված միջոցառումներ իր իսկ կողմից հաստատապես չեն ձեռնարկվում: Հարցվածների 13.4%-ը դժվարացել է պատասխանել հարցին՝ հավանաբար հստակ պատկերացում չունենալով անհրաժեշտ միջոցառումների բնույթի մասին (գծապատկեր 11):



Գծապատկեր 11. ***«Արդյո՞ք ապահովում եք Ձեր կողմից իրականացված հետազոտության արդյունքի տարածումը (իրազեկումը), գործնական կիրառությունն ու առևտրայնացումը»*** *հարցի պատասխանները*

Հետազոտողների 38.4%-ը հանրամատչելի եղանակով ապահովում է իր իսկ կողմից իրականացված հետազոտության արդյունքների հասարակական հասանելիությունը, 39.6%-ն այն ապահովում է որոշակի վերապահումներով, 7.9%-ը կարծում է, որ նման միջոցառումները խիստ սահմանափակ բնույթ են կրում, իսկ 0.6%-ն անկեղծ խոստովանում է, որ ընդհանրապես հակված չէ հետազոտության արդյունքների հասարակական հասանելիության ապահովմանը: Հարցվածների 13.4%-ը դժվարացել է պատասխանել հարցին (գծապատկեր 12):



Գծապատկեր 12. ***«Արդյո՞ք ապահովում եք Ձեր կողմից իրականացված հետազոտության արդյունքի հասարակական հասանելիությունը՝ հանրամատչելի եղանակով»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների 49.4%-ը հաստատապես պնդում է, որ ՀՊՏՀ-ում խրախուսվում է ոչ խտրական վերաբերմունքը հետազոտողների նկատմամբ՝ այն չպայմանավորելով սեռով, տարիքով, սեռական կողմնորոշմամբ, քաղաքական հայացքներով, սոցիալ-տնտեսական կարգավիճակով և այլնով: Միաժամանակ, 27.4%-ի համոզմամբ՝ հետազոտողների նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքը ՀՊՏՀ-ում հիմնականում խրախուսվում է, թեև որոշ դեպքերում հնարավոր են բացառություններ: 4.9%-ի կարծիքով՝ բուհում խտրական մոտեցումն առավել տարածված է, և խտրականության բացառումն է հազվադեպ բնույթ կրում, իսկ 4.3%-ը պնդում է, որ ՀՊՏՀ-ում չի խրախուսվում հետազոտողների նկատմամբ ոչ խտրական վերաբերմունքը: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 14%-ը (գծապատկեր 13):



Գծապատկեր 13. ***«Արդյո՞ք ՀՊՏՀ-ում խրախուսվում է ոչ խտրական վերաբերմունքը հետազոտողների նկատմամբ (սեռով, տարիքով, սեռական կողմնորոշմամբ, քաղաքական հայացքներով, սոցիալ-տնտեսական կարգավիճակով և այլնով պայմանավորված)»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների միայն 35.4%-ն է հաստատապես պնդում, որ ՀՊՏՀ-ի կողմից պարբերաբար և թափանցիկ կերպով գնահատվում է հետազոտողի գործունեությունը (հետազոտություններ, դասախոսական գործունեություն, գիտական ղեկավարում, ազգային և միջազգային համագործակցություն, շարժունություն): 39%-ն այն համոզմունքն ունի, որ այդ գործընթացում դեռևս առկա են որոշակի թերացումներ, մինչդեռ 9.1%-ը թերահավատորեն է վերաբերվում ՀՊՏՀ-ի կողմից հետազոտողի գործունեության պարբերական և թափանցիկ գնահատման իրողությանը, իսկ 0.6%-ը համոզված է, որ նման գնահատում պարզապես չի իրականացվում: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 15.9%-ը (գծապատկեր 14):



Գծապատկեր 14. ***«Արդյո՞ք հետազոտողի գործունեությունը (հետազոտություններ, դասախոսական գործունեություն, գիտական ղեկավարում, ազգային և միջազգային համագործակցություն, շարժունություն) ՀՊՏՀ-ի կողմից պարբերաբար և թափանցիկ կերպով գնահատվում է»*** *հարցի պատասխանները*

Հետազոտողների 40.9%-ը հավաստիացած է, որ հետազոտողների աշխատանքի ընդունման գործընթացը՝ ներառյալ ասպիրանտուրայի ընդունելությունը, հիմնվում է հստակ սահմանված չափանիշների վրա, բաց է, թափանցիկ, արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխան, 34.8%-ը նման կառուցակարգերի գործունեությունն ընդունում է որոշակի վերապահումներով, փոխարենը՝ 5.5%-ը կարծում է, որ եթե նույնիսկ համալսարանում գործում են նման կառուցակարգեր, ապա դրանք հիմնականում հազվադեպ և հատվածական բնույթ են կրում: Այդուհանդերձ, հարցվածների շրջանում չեն գրանցվել գործընթացի իսպառ բացակայությունը մատնանշող կարծիքներ, թեև 18.9%-ը դժվարացել է պատասխանել հարցին (գծապատկեր 15):



Գծապատկեր 15. ***«Արդյո՞ք հետազոտողների աշխատանքի ընդունման գործընթացը, ներառյալ ասպիրանտուրայի ընդունելությունը, հիմնվում է հստակ սահմանված չափանիշների վրա, բաց է, թափանցիկ, արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխան»*** *հարցի պատասխանները*

Հարցմանը մասնակցած պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների 38.4%-ը համոզված է, որ ՀՊՏՀ-ում աշխատանքի ընդունման հայտարարությունները միանգամայն նկարագրում են պահանջվող ունակությունները և գիտելիքները, ինչպես նաև աշխատանքի պայմանները և գործառույթները, իսկ աշխատանքի հայտարարության տրման և մրցույթի անցկացման միջև ժամանակահատվածը դիմելու համար իրատեսական է: Շուրջ 40.2%-ը ևս կարծում է, որ նշված ընթացակարգը պահպանվում է, սակայն՝ որոշ թերացումներով: Միաժամանակ, 6.7%-ը հակված է այն կարծիքին, որ աշխատանքի ընդունման ընթացակարգերը դեռևս կայացած չեն, և դրանց որոշակի տարրերի կիրառումը մշտական և անխափան բնույթ չի կրում: Ընթացակարգերի իսպառ բացակայությունը մատնանշող կարծիքներ չեն արձանագրվել, թեև 14.6%-ը դժվարացել է պատասխանել հարցին (գծապատկեր 16):



Գծապատկեր 16. ***«Արդյո՞ք աշխատանքի ընդունման հայտարարությունները նկարագրում են պահանջվող ունակությունները և գիտելիքները, ինչպես նաև աշխատանքի պայմանները և գործառույթները, իսկ աշխատանքի հայտարարության տրման և մրցույթի անցկացման միջև ժամանակահատվածը դիմելու համար իրատեսական է»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների միայն 34.1%-ն է համոզված, որ ՀՊՏՀ-ում աշխատանքի ընդունման՝ ներառյալ ասպիրանտուրայի ընդունելության համար պատասխանատու հանձնաժողովները որակյալ և մասնագիտական կարողությունների, սեռային, մասնագիտական փորձի տեսակետից հավասարակշռված կազմ ունեն և իրականացնում են թեկնածուների օբյեկտիվ գնահատում: Այդ կարծիքը որոշակի վերապահումներով է կիսում հետազոտողների 41.5%-ը, մինչդեռ 4.3%-ն առավել հոռետեսական պատկերացումներ ունի խնդրի վերաբերյալ: Միայն 0.6%-ն է կարծում, որ համալսարանում լուրջ բացթողումներ են առկա պատասխանատու հանձնաժողովների ձևավորման սկզբունքների հավասարության և դրանց գործունեության օբյեկտիվության պահպանման հարցերում: Հարցադրմանը դժվարացել է պատասխնել 19.5%-ը (գծապատկեր 17):



Գծապատկեր 17. ***«Աշխատանքի ընդունման՝ ներառյալ ասպիրանտուրայի ընդունելության համար պատասխանատու հանձնաժողովները որակյալ և հավասարակշռված կազմ ունեն (մասնագիտական կարողությունների, սեռային, մասնագիտական փորձի տեսակետից) և իրականացնում են թեկնածուների օբյեկտիվ գնահատում»*** *պնդման պատասխանները*

Հետազոտողների 30.5%-ը հավաստիացնում է, որ թափուր տեղերի համալրման մրցույթին մասնակցելիս հաստատապես բավարար տեղեկություն է ստացել ընդունելության չափանիշների և գործընթացի վերաբերյալ (թափուր տեղերի քանակ, կարիերայի հեռանկարներ, մրցույթից հետո պատշաճ արձագանք թեկնածուի թույլ և ուժեղ կողմերի մասին), շուրջ 40.9%-ը վերոնշյալ տեղեկությունը ստացել է, սակայն ոչ լիարժեք կերպով, իսկ 7.3%-ը հակված է այն կարծիքին, որ ընդունելության չափանիշների և գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը մակերեսային է և ոչ բավարար: Իսկ 1.2%-ի կարծիքով՝ նման տեղեկություն կամ չի տրամադրվել, կամ այն բավարար չի եղել: Հարցվածների 20.1%-ը դժվարացել է պատասխանել հարցին (գծապատկեր 18):



Գծապատկեր 18. ***«Թափուր տեղերի համալրման մրցույթին մասնակցելիս արդյո՞ք բավարար տեղեկություն ստացել եք ընդունելության չափանիշների և գործընթացի վերաբերյալ (թափուր տեղերի քանակ, կարիերայի հեռանկարներ, մրցույթից հետո պատշաճ արձագանք թեկնածուի թույլ և ուժեղ կողմերին և այլն»*** *հարցի պատասխանները*

Հետազոտողների 23.8%-ը հաստատակամ է այն հարցում, որ ՀՊՏՀ-ում աշխատանքի ընդունման սահմանված պահանջները միանգամայն բավարար են թեկնածուի հմտությունները, կարողությունները, փորձը և ձեռքբերումները առավելագույնս գնահատելու համար, ևս 48.2%-ն ընդհանուր առմամբ բավարարված է սահմանված պահանջներից, թեև չի բացառում որոշ թերացումների դրսևորումը, փոխարենը՝ 11%-ը կարծում է, որ աշխատանքի ընդունման սահմանված պահանջները միայն նվազագույն չափով են նպաստում թեկնածուի հմտությունները, կարողությունները, փորձը և ձեռքբերումները գնահատելու համար, իսկ 1.8%-ը համոզված է, որ դրանք որևէ կերպ չեն նպաստում թեկնածուների արժանիքների գնահատմանը: Հարցին դժվարացել է պատասխանել 15.2%-ը (գծապատկեր 19):



Գծապատկեր 19. ***«ՀՊՏՀ-ում աշխատանքի ընդունման սահմանված պահանջները արդյո՞ք բավարար են թեկնածուի հմտությունները, կարողությունները, փորձը և ձեռքբերումները առավելագույնս գնահատելու համար»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների միայն 12.3%-ն է հաստատապես պնդում, որ ՀՊՏՀ-ում աշխատակիցների ատեստավորման պահանջները բավարար են վերջիններիս հմտությունները, կարողությունները, փորձը և ձեռքբերումները առավելագույնս գնահատելու համար, գերակշիռ մասը՝ 40.9%-ը, ատեստավորման պահանջների արդյունավետությանը վերաբերվում է որոշակի վերապահումով, 13.4%-ն այդ առնչությամբ ունի առավել խիստ մոտեցումներ՝ հարցին տալով «ավելի շատ ոչ, քան այո» պատասխանը, իսկ 4.9%-ը վստահ է, որ սահմանված ատեստավորման պահանջներն ընդհանրապես չեն նպաստում աշխատակիցների մասնագիտական հնարավորությունների բացահայտմանը: Միաժամանակ, հարցի պատասխանից խուսափել է ՊԴ կազմի 28%-ը (գծապատկեր 20):



Գծապատկեր 20. ***«ՀՊՏՀ-ում աշխատակիցների ատեստավորման պահանջներն արդյո՞ք բավարար են վերջիններիս հմտությունները, կարողությունները, փորձը և ձեռքբերումները առավելագույնս գնահատելու համար»*** *հարցի պատասխանները*

«Աշխատանքային գործունեության ընդհատումներից հետո ՀՊՏՀ-ն չի՞ խոչընդոտում տվյալ աշխատակցի՝ աշխատանքի վերադարձը» հարցին մասնակիցների 22.6%-ը պատասխանել է «միանշանակ այո», 17.7%-ը՝ «ավելի շատ այո, քան ոչ», 6.7%-ը հակված է «ավելի շատ ոչ, քան այո» տարբերակին, իսկ ընդամենը 0.6%-ը պատասխանել է՝ «միանշանակ ոչ, բուհում խտրականություն է դրվում նման դեպքերում»: Հարցվածների 1.8%-ը հաստատել է, որ եղել է հարկադրված աշխատանքային դադար, սակայն դժվարացել է պատասխանել, իսկ գերակշիռ մասը կամ 50.6%-ը դժվարացել է պատասխանել՝ հարկադրված աշխատանքային դադարում չլինելու պատճառով (գծապատկեր 21):

Հարցվածների 43.9%-ը համոզված է, որ բուհի կողմից միանգամայն ճանաչվում և գնահատվում է միջոլորտային, միջգիտակարգային, աշխարհագրական շարժունության փորձառությունը, 31.1%-ի համոզմամբ՝ նման փորձառությունը թեև ճանաչվում է բուհի կողմից, սակայն դեռևս առկա են որոշակի խնդիրներ: Խնդիրները շատ ավելի լուրջ են 3.7%-ի համար, իսկ ընդամենը 1.2%-ը պնդում է, որ միջոլորտային, միջգիտակարգային, աշխարհագրական շարժունության փորձառությունը բուհի կողմից հաստատապես

չի ճանաչվում և չի գնահատվում: Շուրջ 20.1%-ը դժվարացել է պատասխանել (գծապատկեր 22):



Գծապատկեր 21. ***«Աշխատանքային գործունեության ընդհատումներից հետո ՀՊՏՀ-ն չի՞ խոչընդոտում տվյալ աշխատակցի՝ աշխատանքի վերադարձը»*** *հարցի պատասխանները*



Գծապատկեր 22. ***«Բուհի կողմից ճանաչվում և գնահատվում է միջոլորտային, միջգիտակարգային, աշխարհագրական շարժունության փորձառությունը»*** *պնդման պատասխանները*

Հետազոտողների 27.4%-ը պնդում է, որ ՀՊՏՀ-ի կողմից անվերապահորեն ճանաչվում են հետազոտողի ակադեմիական և մասնագիտական որակավորումները, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթությունը հավաստող փաստաթղթերը: 45.1%-ի կարծիքով՝ դրանք ճանաչվում են որոշակի վերապահումներով, 8.5%-ը համարում է, որ վերջիններս հազվադեպ են ճանաչվում, և միայն 0.6%-ն է համոզված, որ հետազոտողի ակադեմիական և մասնագիտական որակավորումները, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթությունը հավաստող

փաստաթղթերը ՀՊՏՀ-ի կողմից չեն ճանաչվում: Հարցին դժվարացել է պատասխանել մասնակիցների 18.3%-ը (գծապատկեր 23):



Գծապատկեր 23. ***«ՀՊՏՀ-ի կողմից արդյո՞ք ճանաչվում են հետազոտողի ակադեմիական և մասնագիտական որակավորումները, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթությունը հավաստող փաստաթղթերը»*** *հարցի պատասխանները*

Այն բանում, որ ՀՊՏՀ-ում մասնագիտական առաջխաղացումը հիմնվում է մասնագիտական ձեռքբերումների և ոչ դրանց սուբյեկտիվ գնահատման վրա, համոզված է հարցվածների 23.8%-ը, 47%-ը, այդուհանդերձ, հավանական է համարում սուբյեկտիվ մոտեցումների դրսևորումները, 10.4%-ը կարծում է, որ սուբյեկտիվ գնահատմանն առավել մեծ դեր է հատկացվում, և միայն 1.2%-ն է կարծում, որ մասնագիտական առաջխաղացումը ՀՊՏՀ-ում հիմնվում է զուտ սուբյեկտիվ գնահատման վրա՝ առանց հաշվի առնելու մասնագիտական ձեռքբերումները: Հարցին խուսափել է պատասխանել շուրջ 17.7%-ը (գծապատկեր 24):



Գծապատկեր 24. ***«ՀՊՏՀ-ում մասնագիտական առաջխաղացումը հիմնվում է մասնագիտական ձեռքբերումների և ոչ թե դրանց սուբյեկտիվ գնահատման վրա»*** *պնդման պատասխանները*

Հարցվածների 32.3%-ը համոզված է, որ հետազոտություններում ընդգրկվող հետազոտողներին ՀՊՏՀ-ն դիտարկում է որպես ոլորտի մասնագետների՝ անկախ նրանց կարգավիճակից (մագիստրոս, ասպիրանտ, թեկնածու, դոկտորանտ և այլն),

այդ կարծիքը որոշակի վերապահումներով է կիսում մասնակիցների 38.4%-ը, 4.9%-ը, ընդհակառակը, կարծում է, որ հազվադեպ են տարբեր կարգավիճակ ունեցող մասնագետները դիտարկվում հավասարապես, և միայն 0.6%-ն է պնդում, որ հետազոտողների կարգավիճակն է որոշում նրանց նկատմամբ վերաբերմունքը: Հարցին դժվարացել է պատասխանել 23.8%-ը (գծապատկեր 25):



Գծապատկեր 25. ***«Հետազոտություններում ընդգրկվող հետազոտողներին ՀՊՏՀ-ն դիտարկում է որպես ոլորտի մասնագետների՝ անկախ նրանց կարգավիճակից (մագիստրոս, ասպիրանտ, թեկնածու, դոկտորանտ և այլն)»*** *պնդման պատասխանները*

Այն պնդմանը, թե գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար ՀՊՏՀ-ում բավարար են տեխնիկական հագեցվածությունն ու ծրագրային ապահովվածությունը, անվերապահորեն համաձայնել է հարցվողների 22.6%-ը, 47%-ը համաձայնել է որոշակի վերապահումներով, 17.1%-ը կարծում է, որ պնդումը հիմնականում իրականությանը չի համապատասխանում, իսկ 1.8%-ի կարծիքով՝ այն բացարձակ կապ չունի իրականության հետ: Շուրջ 11.6%-ը դժվարացել է պատասխանել (գծապատկեր 26):



Գծապատկեր 26. ***«Գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար ՀՊՏՀ-ում արդյո՞ք բավարար են տեխնիկական հագեցվածությունն ու ծրագրային ապահովվածությունը»*** *հարցի պատասխանները*

Հարցմանը մասնակիցների միայն 32.3%-ն է միանգամայն համաձայն, որ բուհում սահմանված աշխատանքային պայմանները հնարավորինս ճկուն են և թույլ են տալիս համատեղել լիարժեք անձնական կյանքն ու աշխատանքը, ներառյալ՝ հատուկ կարիքավորների համար անհրաժեշտ պայմանները: 43.9%-ը հիմնականում համամիտ է պնդման հետ, սակայն չի բացառում որոշ թերությունների կամ բացթողումների առկայությունը, 14.6%-ի կարծիքով՝ աշխատանքային պայմանները բավականաչափ ճկուն չեն և որոշ դեպքերում խոչընդոտում են աշխատանքը լիարժեք անձնական կյանքի հետ համատեղելուն, իսկ 1.8%-ը հակված է կարծելու, որ ՀՊՏՀ-ում աշխատանքային պայմանները բացարձակապես ճկուն չեն: Հարցին դժվարացել է պատասխանել մասնակիցների 7.3%-ը (գծապատկեր 27):



Գծապատկեր 27. ***«Բուհում սահմանված աշխատանքային պայմանները արդյո՞ք հնարավորինս ճկուն են և թույլ են տալիս համատեղել լիարժեք անձնական կյանքն ու աշխատանքը, ներառյալ հատուկ կարիքավորների համար անհրաժեշտ պայմանները»*** *հարցի պատասխանները*

Պրոֆեսորադասախոսական կազմի 31.7%-ը կարծում է, որ ՀՊՏՀ-ն հետազոտողի աշխատանքային գործունեության համար լիարժեքորեն ապահովում է կայունության և հուսալիության համապատասխան երաշխիքներ, 39.6%-ը պնդմանը համաձայնել է որոշակի վերապահումներով, մինչդեռ 6.7%-ը հակված է այն կարծիքին, որ նման երաշխիքներ ՀՊՏՀ-ի կողմից հազվադեպ են ապահովվում, իսկ ընդամենը 0.6%-ը վստահ է, որ կայունության և հուսալիության համապատասխան երաշխիքները հետազոտողի աշխատանքային գործունեության համար բուհի կողմից լիարժեքորեն չեն ապահովվում: Միաժամանակ, 21.1%-ը դժվարացել է պատասխանել (գծապատկեր 28):

Հարցվածների միայն 11.6%-ն է կարծում, որ հետազոտական գործունեության համար ՀՊՏՀ-ի կամ հետազոտությունը ֆինանսավորող կազմակերպությունների կողմից տրամադրվում են արդար և գրավիչ ֆինանսավորման պայմաններ և սոցիալական ապահովության երաշխիքներ: 36%-ն այն համոզմունքն ունի, որ տրամադրվող ֆինանսավորման պայմաններն ու սոցիալական երաշխիքները ոչ միշտ են գրավիչ կամ արդար, 7.9%-ի կարծիքով՝ դրանք մեծավ մասամբ այնքան էլ գրավիչ չեն, իսկ 1.8%-ը կարծում է, որ հետազոտական գործունեության համար տրամադրվող ֆինանսավոր-

ման պայմանները և սոցիալական ապահովության երաշխիքները բացարձակապես հեռու են արդար և գրավիչ լինելուց: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների նշանակալի մասը, այն է՝ 42.7%-ը (գծապատկեր 29):



Գծապատկեր 28. ***«ՀՊՏՀ-ն արդյո՞ք հետազոտողի աշխատանքային գործունեության համար ապահովում է կայունության և հուսալիության համապատասխան երաշխիքներ»*** *հարցի պատասխանները*



Գծապատկեր 29. ***«Հետազոտական գործունեության համար ՀՊՏՀ-ի կամ հետազոտությունը ֆինանսավորող կազմակերպությունների կողմից տրամադրվո՞ւմ են արդյոք արդար և գրավիչ ֆինանսավորման պայմաններ և սոցիալական ապահովության երաշխիքներ»*** *հարցի պատասխանները*

ՀՊՏՀ պրոֆեսորադասախոսական կազմի 48.2%-ի կարծիքով՝ համալսարանի գործունեության կրթական, գիտահետազոտական, վարչական, ուսումնաօժանդակ և այլ ոլորտներում լիարժեքորեն պահպանված է գենդերային հավասարակշռությունը: 35.4%-ի համոզմամբ՝ այն հիմնականում պահպանված է, թեև հնարավոր են որոշ բացառություններ, 4.3%-ը կարծում է, որ գենդերային հավասարությունը հազվադեպ է պահպանվում: Հարցադրմանը բացասական պատասխաններ չեն տրվել, իսկ 12.2%-ն ընդհանրապես դժվարացել է պատասխանել (գծապատկեր 30):



Գծապատկեր 30. ***«Համալսարանի գործունեության կրթական, գիտահետազոտական, վարչական, ուսումնաօժանդակ և այլ ոլորտներում արդյո՞ք պահպանված է գենդերային հավասարակշռությունը»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների 32.3%-ը վստահ է, որ միջոլորտային, աշխարհագրական շարժունությունը ՀՊՏՀ-ի կողմից կարևորվում է որպես մասնագիտական առաջխաղացման հնարավորություն և ամրագրված է ռազմավարության մեջ, 40.9%-ը թեև համամիտ է պնդմանը, սակայն այդ հարցում չունի լիակատար վստահություն, 4.9%-ը հարցադրմանը տվել է «ավելի շատ ոչ, քան այո» պատասխանը: Բացասական պատասխաններ չեն տրվել, թեև 22%-ը խուսափել է հարցին հստակորեն պատասխանելուց (գծապատկեր 31):



Գծապատկեր 31. ***«ՀՊՏՀ –ի կողմից կարևորվո՞ւմ է արդյոք միջոլորտային, աշխարհագրական շարժունությունը՝ որպես մասնագիտական առաջխաղացման հնարավորություն և ամրագրվա՞ծ է ռազմավարության մեջ»*** *հարցի պատասխանները*

Հարցման մասնակիցների 23.8%-ը հավաստիացած է, որ ՀՊՏՀ հետազոտական գործունեության բոլոր մակարդակներում (սկսնակից մինչև փորձառու հետազոտող) գործում են մասնագիտական առաջընթացի շարունակական ապահովման, աջակցության ու խորհրդատվության կառուցակարգեր: 40.2%-ի պնդմամբ՝ այդ կառուցակարգերի գործունեության մասով առկա են որոշակի թերացումներ, 14%-ը հարցի վերաբերյալ ունի առավել հոռետեսական հայացքներ՝ լուրջ կասկածի տակ դնելով նմանօրինակ կառուցակարգերի անխափան գործունեությունը կամ դրանց կիրառությունը հետազո-

տական գործունեության բոլոր մակարդակներում, և ընդամենը 0.6%-ի համոզմամբ՝ նման կառուցակարգեր բացարձակապես չեն գործում: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 21.3%-ը (գծապատկեր 32):



Գծապատկեր 32. ***«ՀՊՏՀ հետազոտական գործունեության բոլոր մակարդակներում արդյո՞ք գործում են մասնագիտական առաջընթացի շարունակական ապահովման, աջակցության ու խորհրդատվության կառուցակարգեր (սկսնակից մինչև փորձառու հետազոտող)»*** *հարցի պատասխանները*

«Արդյո՞ք պաշտպանված է Ձեր հետազոտական գործունեության արդյունքների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքը» հարցին «միանշանակ այո» է պատասխանել հարցման մասնակիցների 26.8%-ը, 31.1%-ը պատասխանել է «ավելի շատ այո, քան ոչ», 14%-ը՝ «ավելի շատ ոչ, քան այո», և ընդամենը 1.2%-ն է պատասխանել «միանշանակ ոչ»: Դժվարացել է պատասխանել հարցվածների շուրջ 26.8%-ը (գծապատկեր 33):



Գծապատկեր 33. ***«Արդյո՞ք պաշտպանված է Ձեր հետազոտական գործունեության արդյունքների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքը»*** *հարցի պատասխանները*

Հետազոտողների գերակշիռ մասը կամ 50.6%-ը վստահեցնում է, որ ՀՊՏՀ-ի կողմից խրախուսվում է համահեղինակությամբ հետազոտական աշխատանքը (այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հրապարակումները), 31.7%-ի կարծիքով՝ համահեղինակությամբ հետազոտական աշխատանքները ոչ միշտ են խրախուսելի,

3%-ի համոզմամբ՝ դրանք խիստ հազվադեպ են խրախուսանքի արժանանում, ևս 0.6%-ը կարծում է, որ նման հետազոտությունները բացարձակապես չեն խրախուսվում: Միաժամանակ, 14%-ը խուսափել է հարցին որոշակի պատասխան տալուց (գծապատկեր 34):



Գծապատկեր 34. ***«ՀՊՏՀ-ի կողմից խրախուսվո՞ւմ է արդյոք համահեղինակությամբ հետազոտական աշխատանքը (այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հրապարակումները)»*** *հարցի պատասխանները*

Հարցմանը մասնակցած պրոֆեսորադասախոսական կազմի միայն 15.9%-ն է աշխատանքի հետազոտական ու դասավանդման բաղադրիչների միջև ծանրաբեռնվածության առկա բաշխումը միանգամայն արդյունավետ համարում, 36%-ի կարծիքով՝ այս մասով դեռևս առկա է բարելավման անհրաժեշտություն, 23.2%-ի համոզմամբ՝ ներկայում գործող բաշխումը հեռու է արդյունավետ լինելուց, իսկ 10.4%-ի պնդմամբ՝ այն բացարձակապես արդյունավետ չէ: Հարցին դժվարացել է պատասխանել հարցվածների 14.6%-ը (գծապատկեր 35):



Գծապատկեր 35. ***«Արդյունավե՞տ եք արդյոք համարում ծանրաբեռնվածության առկա բաշխումը աշխատանքի հետազոտական ու դասավանդման բաղադրիչների միջև»*** *հարցի պատասխանները*

«Ըստ Ձեզ՝ պատշաճ ընթացք տրվո՞ւմ է հետազոտողի կողմից ներկայացված բողոքներին» հարցին 18.9%-ն է պատասանել «միանշանակ այո», 26.2%-ի դեպքում տրվել է «ավելի շատ այո, քան ոչ» պատասխանը, 6.1%-ի դեպքում՝ «ավելի շատ ոչ,

քան այո», իսկ 1.2%-ը հակված է «միանշանակ ոչ» պատասխանին: Բավական մեծ կշիռ ունեն հարցին պատասխանելու դժվարություն ունեցողները՝ 47.6%-ը (գծապատկեր 36):



Գծապատկեր 36. ***«Ըստ Ձեզ՝ պատշաճ ընթացք տրվո՞ւմ է հետազոտողի կողմից ներկայացված բողոքներին»*** *հարցի պատասխանները*

«ՀՊՏՀ-ում Ձեր մասնակցությամբ կառավարման մարմիններում որոշումների ընդունմանն առնչվող Ձեր կողմից ներկայացվող առաջարկություններն ունենո՞ւմ են արդյոք պատշաճ ընթացք» հարցին 22%-ը պատասխանել է «միանշանակ այո», 31.7%-ը՝ «ավելի շատ այո, քան ոչ», իսկ 7.3%-ը հակված է «ավելի շատ ոչ, քան այո» պատասխանին, «միանշանակ ոչ» պատասխան չի տրվել: Միաժամանակ, մեծ կշիռ ունեն հարցին պատասխանելու դժվարություն ունեցողները՝ 39%-ը (գծապատկեր 37):



Գծապատկեր 37. ***«ՀՊՏՀ-ում Ձեր մասնակցությամբ կառավարման մարմիններում որոշումների ընդունմանն առնչվող Ձեր կողմից ներկայացվող առաջարկություններն ունենո՞ւմ են արդյոք պատշաճ ընթացք»*** *հարցի պատասխանները*

Հարցվածների 28%-ի կարծիքով՝ հետազոտողի կողմից ներկայացված բողոքներին միանշանակ տրվում է պատշաճ ընթացք, 45.7%-ն այն համոզմունքն ունի, որ ոչ միշտ է պատշաճ ընթացք տրվում նման բողոքներին, 5.5%-ի պատկերացմամբ՝ նման ընթացքը խիստ հազվադեպ բնույթ է կրում, իսկ 0.6%-ի պնդմամբ՝ հետազոտողի կող-

մից ներկայացված բողոքներին միանշանակ պատշաճ ընթացք չի տրվում: Հարցին դժվարացել է պատասխանել մասնակիցների 20.1%-ը (գծապատկեր 38):



Գծապատկեր 38. ***«Ըստ Ձեզ՝ պատշաճ ընթացք տրվո՞ւմ է հետազոտողի կողմից ներկայացված բողոքներին»*** *հարցի պատասխանները*

Հարցմանը մասնակից պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների գերակշիռ մեծամասնությունը՝ 68.3%-ը, միանգամայն վստահ է, որ տարբեր գիտական միջոցառումներին կանոնավոր կերպով մասնակցությունը (այդ թվում՝ ֆորմալ ուսուցում, գիտաժողովներ, աշխատաժողովներ, էլեկտրոնային ուսուցում) նպաստում է հետազոտողի հմտությունների ու կարողությունների ընդլայնմանը, 27.7%-ն այդուհանդերձ կարծում է, որ ոչ բոլոր դեպքերում են նման միջոցառումները նպատակային և օգտակար, 2.4%-ի կարծիքով՝ դրանք նույնիսկ շատ հազվադեպ են նպաստում հետազոտողի հմտությունների ու կարողությունների ընդլայնմանը, իսկ 0.6%-ը հակված է կարծելու, որ դրանք ընդհանրապես օգտակար արդյունք չեն ապահովում: Հարցին դժվարացել է պատասխանել ընդամենը 1.2%-ը (գծապատկեր 39):



Գծապատկեր 39. ***«Ձեր կարծիքով՝ տարբեր գիտական միջոցառումներին կանոնավոր կերպով մասնակցությունը (այդ թվում՝ ֆորմալ ուսուցում, գիտաժողովներ, աշխատաժողովներ, էլեկտրոնային ուսուցում) նպաստո՞ւմ է արդյոք հետազոտողի հմտությունների ու կարողությունների ընդլայնմանը»*** *հարցի պատասխանները*

Հետազոտողների 40.2%-ը համարում է, որ ՀՊՏՀ-ն պարբերաբար կազմակերպում է հետազոտական հմտությունների և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանն ուղղված միջոցառումներ, 40.9%-ի կարծիքով՝ այդպիսի միջոցառումներն ընդլայնման կարիք ունեն, 10.4%-ի համոզմամբ, սակայն, նման միջոցառումները սաստիկ քիչ են դեռևս, իսկ 1.2%-ը պնդում է, որ դրանք պարբերական չեն և խիստ հազվադեպ բնույթ են կրում: Հարցին դժվարացել է պատասխանել մասնակիցների 7.3%-ը (գծապատկեր 40):



Գծապատկեր 40. ***«ՀՊՏՀ-ն պարբերաբար կազմակերպո՞ւմ է արդյոք հետազոտական հմտությունների և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանն ուղղված միջոցառումներ»*** *հարցի պատասխանները*

«Գիտական հետազոտությունների ղեկավար հանդիսանալու չափանիշներն արդյո՞ք հստակ սահմանված են և հիմնվում են մասնագիտական կարողությունների, գիտելիքի, փորձի, ինչպես նաև օժանդակելու, առաջընթացը խթանելու, հետադարձ կապ ապահովելու հանձնառության վրա» հարցին 31.7%-ը պատասխանել է «միանշանակ այո», 40.2%-ը՝ «ավելի շատ այո, քան ոչ», 5.5%-ը՝ «ավելի շատ ոչ, քան այո», մինչդեռ «միանշանակ ոչ» պատասխանել է հարցվածների ընդամենը 1.2%-ը: Մնացած 21.3%-ը դժվարացել է պատասխանել հարցին (գծապատկեր 41):



Գծապատկեր 41. ***«Գիտական հետազոտությունների ղեկավար հանդիսանալու չափանիշներն արդյո՞ք հստակ սահմանված են և հիմնվում են մասնագիտական կարողությունների, գիտելիքի, փորձի, ինչպես նաև օժանդակելու, առաջընթացը խթանելու, հետադարձ կապ ապահովելու հանձնառության վրա»*** *հարցի պատասխանները*

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՐՑԱԹԵՐԹ
ՀՊՏՀ գիտահետազոտական գործունեության կարգավորման, իրականացման և խթանման վերաբերյալ հարցման

Հարգելի՛ գործընկեր (հետազոտող), սույն հարցումն իրականացվում է ՀՊՏՀ-ում ԵՄ «Էրազմուս+» ՀԳ2 նախագծի «Հետազոտությունների կառավարման և բաց գիտության կարողությունների հզորացումը Մոլդովայի և Հայաստանի բուհերում (Minerva)» ծրագրի շրջանակում՝ Հետազոտողների եվրոպական խարտիայի 40 չափանիշներին ՀՊՏՀ-ի համապատասխանության գնահատման գիտահետազոտական ոլորտի ինքնավերլուծության նպատակով: Գիտահետազոտական ոլորտի ինքնավերլուծությունն անհրաժեշտ է Հետազոտողների համաեվրոպական հարթակին՝ EURAXESS-ին անդամակցելու համար: ՀՊՏՀ-ն ակնկալում է ստանալ գերազանցության աստիճան՝ նոր հնարավորություններ ստեղծելով հետազոտական ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնման համար:

Հարցումն անանուն է: Խնդրում ենք հատկացնել ժամանակ՝ հարցաթերթը լրացնելու համար:

Խնդրում ենք նշել Ձեր սեռը՝

- կին
- տղամարդ

Խնդրում ենք նշել Ձեր գիտական աստիճանը՝

- գիտական աստիճան չունեմ
- գիտությունների թեկնածու
- գիտությունների դոկտոր

ՀՊՏՀ-ում աշխատելու տարիները՝

ա) 1-5 բ) 5-10 գ) 10-15 դ) 15-20 ե) 20 տարի և ավելի:

1. ***ՀՊՏՀ-ում կարևորվում են հետազոտական ազատության հիմնարար սկզբունքները (հետազոտական թեմաների, ուղղությունների, մեթոդաբանության ազատ ընտրություն, ազատ կամարտահայտություն՝ հաշվի առնելով ֆինանսական, էթիկական և այլ բնույթի սահմանափակումները):***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

2. ***Արդյո՞ք տեղյակ եք ՀՊՏՀ-ում և Ձեր հետազոտության ոլորտում գործող էթիկայի նորմերի մասին:***
   - ☐ Այո
   - ☐ Ոչ

3. ***Արդյո՞ք հետևում եք դրանց:***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

4. ***ՀՊՏՀ-ում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքում պահպանվո՞ւմ են արդյոք գրագողության կանխարգելման և ակադեմիական էթիկայի մյուս կանոնները:***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

   Խնդրում ենք մատնանշել իրավիճակի շտկմանը նպաստող առաջարկություններ:

   _____

   _____

5. ***Տեղեկացվա՞ծ եք արդյոք Ձեր կողմից իրականացվող հետազոտությունների ոլորտի ռազմավարական նպատակների, հետազոտությունների իրականացման և ընթացիկ հաշվետվողականության գործընթացը կարգավորող իրավական նորմերի, ընթացակարգերի և սկզբունքների վերաբերյալ:***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

6. ***Արդյո՞ք տիրապետում եք հետազոտական գործընթացը կարգավորող իրավապայմանագրային դրույթներին (ազգային, ոլորտային, ինստիտուցիոնալ կարգավորումներ, մտավոր սեփականության իրավունք և այլն):***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

7. ***Արդյո՞ք համալսարանում գործում է հետազոտական գործունեության հաշվետվողականության թափանցիկ համակարգ՝ ներքին և արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող հետազոտությունների համար:***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

8. ***Արդյո՞ք համալսարանն ապահովում է աշխատանքային պայմանների և տեղեկատվական անվտանգության պատշաճ մակարդակ:***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

9. ***Արդյո՞ք ապահովում եք Ձեր կողմից իրականացված հետազոտության արդյունքի տարածումը (իրազեկումը), գործնական կիրառությունն ու առևտրայնացումը:***
   - ☐ Միանշանակ այո
   - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
   - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
   - ☐ Միանշանակ ոչ
   - ☐ Դժվարանում եմ պատասխանել

10. ***Արդյո՞ք ապահովում եք Ձեր կողմից իրականացված հետազոտության արդյունքի հասարակական հասանելիությունը՝ հանրամատչելի եղանակով:***
    - ☐ Միանշանակ այո
    - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
    - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
    - ☐ Միանշանակ ոչ
    - ☐ Դժվարանում եմ պատասխանել

11. ***Արդյո՞ք ՀՊՏՀ-ում խրախուսվում է ոչ խտրական վերաբերմունքը (սեռով, տարիքով, սեռական կողմնորոշմամբ, քաղաքական հայացքներով, սոցիալ-տնտեսական կարգավիճակով և այլնով պայմանավորված)***
    - ☐ Միանշանակ այո
    - ☐ Ավելի շատ այո, քան ոչ
    - ☐ Ավելի շատ ոչ, քան այո
    - ☐ Միանշանակ ոչ

☐ Դժվարանում եմ պատասխանել

12. ***Հետազոտողի գործունեությունը (հետազոտություններ, դասախոսական գործունեություն, գիտական ղեկավարում, ազգային և միջազգային համագործակցություն, վարչական աշխատանք, հանրային իրազեկման գործունեություն, շարժունություն) ՀՊՏՀ-ի կողմից պարբերաբար և թափանցիկ կերպով գնահատվում է, և գնահատականները հաշվի են առնվում առաջխաղացման նպատակով:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

13. ***Հետազոտողների աշխատանքի ընդունման գործընթացը, ներառյալ ասպիրանտուրայի ընդունելությունը, հիմնվում է հստակ սահմանված չափանիշների վրա, բաց է, թափանցիկ, արդյունավետ և միջազգային չափանիշներին համապատասխան:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

14. ***Աշխատանքի ընդունման հայտարարությունները, ներառյալ ասպիրանտուրայի ընդունելությունը, նկարագրում են պահանջվող ունակությունները և գիտելիքները, ինչպես նաև աշխատանքի պայմանները և գործառույթները, իսկ աշխատանքի հայտարարության տրման և մրցույթի անցկացման միջև ընկած ժամանակահատվածը դիմելու համար իրատեսական է:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

15. ***Աշխատանքի ընդունման, ներառյալ ասպիրանտուրայի ընդունելության համար պատասխանատու հանձնաժողովները որակյալ և հավասարակշռված կազմ ունեն (մասնագիտական կարողությունների, սեռային, մասնագիտական փորձի տեսակետից) և իրականացնում են թեկնածուների օբյեկտիվ գնահատում:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

16. ***Թափուր տեղերի համալրման* մրցույթին, ներառյալ ասպիրանտուրայի ընդունելությունը, մասնակցելիս արդյո՞ք բավարար տեղեկություն ստացել եք ընդունելության չափանիշների և գործընթացի վերաբերյալ (թափուր տեղերի քանակ, կարիերայի հեռանկարներ, մրցույթից հետո պատշաճ արձագանք թեկնածուի թույլ և ուժեղ կողմերին և այլն):***
☐ Միանշանակ այո

- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

17. ***ՀՊՏՀ-ում աշխատանքի ընդունման սահմանված պահանջներն արդյո՞ք բավարար են թեկնածուի հմտությունները, կարողությունները, փորձը և ձեռքբերումներն առավելագույնս գնահատելու համար:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

18. ***ՀՊՏՀ-ում աշխատակիցների ատեստավորման պահանջներն արդյո՞ք բավարար են վերջիններիս հմտությունները, կարողությունները, փորձը և ձեռքբերումներն առավելագույնս գնահատելու համար:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

19. ***Աշխատանքային գործունեության ընդհատումներից հետո ՀՊՏՀ-ն չի խոչընդոտում տվյալ աշխատակցի՝ աշխատանքի վերադարձը:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ, բուհում խտրականություն է դրվում նման դեպքերում:
- ☐ Անձամբ եղել եմ հարկադրված աշխատանքային դադարում, սակայն դժվարանում եմ պատասխանել:
- ☐ Անձամբ չեմ եղել հարկադրված աշխատանքային դադարում, դժվարանում եմ պատասխանել:

20. ***Բուհի կողմից ճանաչվում և գնահատվում է միջոլորտային, միջգիտակարգային, աշխարհագրական շարժունության փորձառությունը:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

21. ***ՀՊՏՀ-ի կողմից արդյո՞ք ճանաչվում են հետազոտողի ակադեմիական և մասնագիտական որակավորումները, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթությունը հավաստող փաստաթղթերը:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ

☐ Դժվարանում եմ պատասխանել

22. ***ՀՊՏՀ-ում կարիերայի առաջխաղացումը հիմնվում է մասնագիտական ձեռքբերումների և ոչ դրանց սուբյեկտիվ գնահատման վրա:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

23. ***ՀՊՏՀ-ն հետազոտություններում ընդգրկվող հետազոտողներին դիտարկում է որպես ոլորտի մասնագետների՝ անկախ նրանց կարգավիճակից (մագիստրոս, ասպիրանտ, թեկնածու, դոկտորանտ և այլն):***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

24. ***Գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար ՀՊՏՀ-ում արդյո՞ք բավարար են տեխնիկական հագեցվածությունն ու ծրագրային ապահովվածությունը:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

25. ***Արդյո՞ք բուհում սահմանված աշխատանքային պայմանները հնարավորինս ճկուն են և թույլ են տալիս համատեղել լիարժեք անձնական կյանքն ու աշխատանքը՝ ներառյալ հատուկ կարիքավորների համար անհրաժեշտ պայմանները:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

26. ***Արդյո՞ք ՀՊՏՀ-ն հետազոտողի աշխատանքային գործունեության համար ապահովում է կայունության և հուսալիության համապատասխան երաշխիքներ:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

27. ***Արդյո՞ք հետազոտական գործունեության համար ՀՊՏՀ-ի կամ հետազոտությունը ֆինանսավորող կազմակերպությունների կողմից տրամադրվում են արդար և գրավիչ ֆինանսավորման պայմաններ և սոցիալական ապահովության երաշխիքներ:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ

☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

28. ***Համալսարանական գործունեության կրթական, գիտահետազոտական, վարչական, ուսումնաօժանդակ և այլ ոլորտներում արդյո՞ք պահպանվում է գենդերային հավասարակշռությունը:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

29. ***Արդյո՞ք ՀՊՏՀ-ի կողմից կարևորվում է միջոլորտային, միջգիտակարգային, աշխարհագրական շարժունությունը՝ որպես մասնագիտական առաջխաղացման հնարավորություն և ամրագրված է ռազմավարության մեջ:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

30. ***Արդյո՞ք ՀՊՏՀ հետազոտական գործունեության բոլոր մակարդակներում գործում են մասնագիտական առաջընթացի շարունակական ապահովման, աջակցության ու խորհրդատվության կառուցակարգեր (սկսնակից մինչև փորձառու հետազոտող):***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

31. ***Արդյո՞ք պաշտպանված է Ձեր հետազոտական գործունեության արդյունքների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքը:***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

32. ***Արդյո՞ք ՀՊՏՀ-ի կողմից խրախուսվում է համահեղինակությամբ հետազոտական աշխատանքը (այդ թվում՝ ազդեցության գործակից ունեցող ամսագրերում հրապարակումները):***
☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

33. ***Արդյունավե՞տ եք համարում ծանրաբեռնվածության առկա բաշխումը աշխատանքի հետազոտական ու դասավանդման բաղադրիչների միջև:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

34. ***Ըստ Ձեզ՝ պատշաճ ընթացք տրվո՞ւմ է արդյոք հետազոտողի կողմից ներկայացված բողոքներին:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

35. ***ՀՊՏՀ-ում Ձեր մասնակցությամբ կառավարման մարմիններում որոշումների ընդունմանն առնչվող Ձեր կողմից ներկայացվող առաջարկություններն ունենո՞ւմ են արդյոք պատշաճ ընթացք:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

36. ***Արդյո՞ք արդյունավետ եք գնահատում գիտական ղեկավար– հետազոտող հարաբերությունները, դրանք կառուցողական են, քննարկումներն իրականացվում են պարբերաբար՝ համաձայն ժամանակացույցի, և առկա է հետադարձ կապ՝ նպաստելով հետազոտողի կարիերայի առաջընթացին:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

37. ***Արդյո՞ք տարբեր գիտական միջոցառումներին կանոնավոր կերպով մասնակցությունը (այդ թվում՝ ֆորմալ ուսուցում, գիտաժողովներ, աշխատաժողովներ, էլեկտրոնային ուսուցում) նպաստում է հետազոտողի հմտությունների ու կարողությունների ընդլայնմանը:***
- ☐ Միանշանակ այո
- ☐ Ավելի շատ այո, քան ոչ
- ☐ Ավելի շատ ոչ, քան այո
- ☐ Միանշանակ ոչ
- ☐ Դժվարանում եմ պատասխանել

38. ***Արդյո՞ք ՀՊՏՀ-ն պարբերաբար կազմակերպում է հետազոտական հմտությունների և մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանն ուղղված միջոցառումներ:***
- ☐ Միանշանակ այո

☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

39. Գիտական հետազոտությունների ղեկավար հանդիսանալու չափանիշներն արդյո՞ք հստակ սահմանված են և հիմնվում են մասնագիտական կարողությունների, գիտելիքի, փորձի, ինչպես նաև օժանդակելու, առաջընթացը խթանելու, հետադարձ կապ ապահովելու հանձնառության վրա:

☐ Միանշանակ այո
☐ Ավելի շատ այո, քան ոչ
☐ Ավելի շատ ոչ, քան այո
☐ Միանշանակ ոչ
☐ Դժվարանում եմ պատասխանել

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար: